

## **Չայնալաբ. արվեստի, գիտության եւ տեխնոլոգիայի փորձարարական հարթակ**

### **Արվեստ Հայաստան Հիմնադրամ, Գյումրիի տեխնոլոգիական կենտրոն**

#### **Ապրիլ-օգոստոս, 2019, Գյումրի, Հայաստան**

Արվեստ Հայաստան Հիմնադրամը եւ Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնը նախաձեռնում են Չայնալաբը՝ արվեստի, գիտության եւ տեխնոլոգիայի փորձարարական հարթակը: Չայնալաբը արվեստի հետազոտական կացարան է, որը կկայանա 2019-ի ապրիլ-օգոստոս ամիսներին, Գյումրիում: Այն կվարի կոմպոզիտոր, դաշնակահար եւ ձայնային արվեստագետ Վարդան Հարությունյանը:

Չայնալաբը նպատակ ունի ստեղծելու արդյունավետ միջավայր ձայնարվեստում հետազոտության, փորձարկումների, արտադրության եւ ներկայացման համար: Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնում հյուրընկալվող ծրագիրը ոգեշնչված է Գյումրից եւ ակտիվորեն հարաբերվելու է քաղաքի եւ նրա առօրյայի հետ տարաբնույթ հանրային միջոցառումներով եւ արվեստային միջամտություններով:

## **S O U N D L A B**

Արվեստի կացարանում առաջին համագործակցային հետազոտությունը կընթանա «Ալիք >> Լեզու» խորագրի ներքո: Ալիքը կյանքի եւ էներգիայի կառուցվածքում հիմնական ձեւերից է: Ալիքների անվերջ տատանումները ստեղծում են բացառիկ «լեզու» եւ կազմակերպում են տեղեկատվությունը մեզ ծանոթ իրականությունում:

Արվեստային հետազոտության մեկնարկային կետերից մեկը հաճախակազրի՝ սպեկտոգրամի գաղափարն է, որը ձայնի, լույսի, մաթեմատիկական ֆունկցիաների կամ պատմական ընթացքների տեսողական ներկայացումն է, եւ թե ինչպես են դրանք փոփոխվում ժամանակի հետ: Այս ընթացքներն իրենց ալիքային ֆունկցիաներով ներկայացնող սպեկտրոգրամը լայն հնարավորություններ է ընձեռում՝ մտածելու ձայնի, ալիքի եւ լեզվի օգնությամբ:

1988-ին կենսախինդ Գյումրին ավերակած սեյսմական ալիքները, ինչպես նաեւ քաղաքի սոցիալական եւ մշակութային լանդշաֆտը, որն իր վրա կրում է տեղական եւ համաշխարհային պատմության ալիքները, կհանդիսանան արվեստային հետազոտությունների երկրորդ ֆոկուսը: Այսօր, երբ քաղաքը դանդաղորեն վերականգնվում է, եւ նրան պակասում են նոր պատումները, «Ալիք>>Լեզու» թեմայի համալիր գաղափարները կարող են միանալ նորացող Գյումրիի ձայնային թրթռումներին:

Ենթադրամաշնորհը իրականացվում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ԹՀ Կամուրջ ծրագրի շրջանակներում՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

## Ծրագրի աշխատանքային ընթացքը

Հայաստանում ապրող փորձարար կոմպոզիտորների եւ արվեստագետների հետ Ձայնալաբը ստեղծում է համագործակցային հետազոտական հարթակ, որին աջակցում են նաեւ արվեստի, մշակույթի, գիտության եւ տեխնոլոգիայի ոլորտների տեղի եւ միջազգային փորձագետները:

Վարդան Հարությունյանը՝ հարթակի համադրողը, իր նպաստը կբերի ստեղծելու հորիզոնական եւ ակտիվ մասնակցային ընթացք, խրախուսելու արվեստագետների միջեւ ցանցի ստեղծումը եւ երաշխավորելու նրանց հավասար ներգրավվումը:

Մասնակից արվեստագետներն ու կոմպոզիտորները կընտրվեն բաց մրցույթի (փետրվար-մարտ, 2019) արդյունքում: Ձայնալաբը նպաստում է Հայաստանի արվեստագետների նոր սերնդի հզորացմանը՝ հարթակ տրամադրելով նրանց հմտությունների զարգացման համար:

Արվեստի կացարանի մասնակիցները մշակելու են անհատական նախագծեր: Մենք ակնկալում ենք, որ նրանք հանրային միջոցառում կամ վարպետության դաս/աշխատարան կկազմակերպեն Գյումրիում, այսպիսով տարածելով իրենց գաղափարները եւ ունենալով փորձի փոխանակման ավելի մեծ դաշտ:

## S O U N D L A B

Տեղի եւ միջազգային մասնագետները կհրավիրվեն դասախոսություններ եւ աշխատարաններ վարելու, ինչպես նաեւ կներկայացնեն իրենց գաղափարներն ու նախագծերը, կնախաձեռնեն քննարկումներ եւ կաջակցեն մասնակիցների անհատական նախագծերին: Մասնագետները կփորձեն օգտակար լինել արվեստագետներին՝ տեղեկացնելով արվեստի ընթացիկ միտումների, վերջին գիտական եւ տեխնոլոգիական նորություններին: Խրախուսելի է նաեւ նրանց անձնական նախագծերի ներկայացումը եւ համագործակցության հրավերը:

## Դիմումների ընթացքը

Արվեստագետների համար բաց մրցույթ՝ փետրվարի-12- մարտի 15, 2019  
Ընտրված նախագծերը հայտարարություն՝ մարտի 23, 2019  
Արվեստի կացարան (2,5 ամիս) ապրիլի 1-հունիսի 14, հունիսի 17- օգոստոսի 31

### Ո՞վ կարող է դիմել

Ձայնալաբը հրավիրում է Հայաստանում ապրող եւ ձայնի փորձարարությամբ զբաղվող նոր սկսող կոմպոզիտորներին եւ արվեստագետներին ուսումնասիրելու «Ալիք>>Լեզու» թեման, եւ բազմակողմ արվեստային հետազոտություն անցկացնելու 2019-ի ապրիլ-օգոստոս ամիսներին Գյումրիի արվեստի կացարանում բնակվելու ընթացքում:

Արվեստի կացարանը տեւում է 2.5 ամիս  
Արվեստագետները կարող են ընտրել ժամկետների միջեւ  
ապրիլի 1-հունիսի 14,  
հունիսի 17- օգոստոսի 31



**S O U N D L A B**

### Ինչ է անհրաժեշտ

PC/Mac-ի տարրական իմացություն  
Ableton, sound forge եւ այլ ծրագրերի իմացությունը ողջունելի է

**Ձայնալաբը տրամադրում է** համագործակցային հարթակ՝ քննարկումների, փորձարկումների եւ արվեստային գաղափարների զարգացման համար, ինչի արդյունքում կստեղծվեն եւ կներկայացվեն նոր արվեստի գործեր:

### Մասնակիցները կստանան՝

- համադրողի աջակցություն եւ գնահատում,
- տեխնիկական աջակցություն եւ առաջին անհրաժեշտ սարքավորումներ
- ընդհանուր արվեստանոց Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնում
- կեցություն Գյումրիում,
- կրթաթոշակ,
- աջակցություն աշխատանքը հանրայնորեն ներկայացնելու հարցում,
- տեղեկատվական աջակցություն եւ տեսանելիություն

## Ծրագիրը չի փոխհատուցում

- աշխատանքի նյութաձախսը
- ճանապարհորդական ծախսեր
- ապահովագրություն

## Ինչպես դիմել

Ուղարկեք լրացված հայտադիմումը եւ պորտֆոլիոն [info@foundationaa.com](mailto:info@foundationaa.com) հասցեին:

Կդիտարկվեն միայն ամբողջական լրացված հայտադիմումները:

Հայտադիմումները կարելի է լրացնել հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներով:  
Հայտադիմումները կդիտարկի անկախ մրցատյանը, որը կազմում ընդգրկված են`

Արամ Հովհաննիսյան  
Եվա Խաչատրյան,  
Լվիա Մեջիա

## S O U N D L A B

Մրցատյանը Հիմնադրամին է ներկայացնում հավանական թեկնածուներին, Հիմնադրամը չի ընտրում մասնակիցներին առանց մրցատյանի դրական եզրակացության: Ընտրված դիմորդները կտեղեկացվեն անձնական զանգի/նամակի միջոցով: Խնդրում ենք այս հարցի վերաբերյալ չզանգահարել/չգրել հիմնադրամին:

Հավելյալ տեղեկությունների եւ հարցերի համար խնդրում ենք գրել [info@foundationaa.com](mailto:info@foundationaa.com) հասցեին:

## Կազմակերպիչներ

**Արվեստ Հայաստան Հիմնադրամը** անկախ հասարակական կազմակերպություն է, որը նպատակ ունի նպաստելու Հայաստանում ժամանակակից արվեստի զարգացմանը: Հիմնադրամը գործում է Երեւանում, այն 2016 թվականին հիմնել են արվեստաբան եւ թանգարանագետ Անուշ Զեյնալյանը եւ հայ գործարարներ Դավիթ եւ Ռաֆայել Նազարյանները: Հիմնադրամն աջակցում է արվեստագետներին արվեստի նախագծերի ֆինանսական օգնությամբ, ինչպես նաեւ արվեստային եւ կրթական նոր ծրագրերով, որոնցում ներգրավված են տեղացի եւ դրսեկ արվեստագետներ, համադրողներ, տեսաբաններ:

[www.foundationaa.com](http://www.foundationaa.com)

**Գյուլրիի տեխնոլոգիական կենտրոնը** հիմնադրվել է 2014-ին՝ Շիրակի մարզում ստեղծելով տեղեկատվական եւ բարձր տեխնոլոգիաների առաջնակարգ Էլեկտրոնային Կենտրոնը հանգույց է հանդիսանում ավելի քան 20 ընկերությունների, 200 մասնագետների եւ 100 միջազգային հաճախորդների համար: Գործարար ծառայություններից բացի, ԳՏԿ-ն առաջարկում է կրթական հարթակ եւ վերապատրաստում է մասնագետների, որոնք հետագայում կարող են համալրել կենտրոնում տեղակայված ՏՏ ընկերությունների աշխատակազմը: Տեխնոլոգիական կենտրոնի առաքելության մասն է նաեւ ստեղծել Հայաստանի հիմնական արդյունաբերությունների թվայնացման մեջ մասնագիտացող միավորումներ:

[www.gtc.am](http://www.gtc.am)

## S O U N D L A B

**Վարդան Հարությունյանը** (1987) կոմպոզիտոր է, դաշնակահար, դիջեյ եւ ձայնային արվեստագետ: Ավարտել է Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը (2003) եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (2009), ստեղծել է Էլեկտրոնային երաժշտություն, դաշտային ձայնագրություններ եւ ձայնարվեստում է սկսած 2010-ից: Հարությունյանը միջազգային համագործակցությունների հարուստ փորձ ունի, աշխատել է Մարկուս Բայթրի (Գերմանիա), Ագաթ Լեպուտդի, Անտուան Ժանոյի, Լոդելին Կյոնինգի (Ֆրանսիա) եւ այլոց հետ: Փորձարարական երաժշտությունից բացի ունի դասական ստեղծագործություններ՝ կամերային, երգչախմբային եւ նվագախմբային գործեր, որը հիմնականում ստեղծվել են ուսումնառության տարիներին: Անհատական եւ խմբային ցուցադրություններից են՝ About 880991 Times Slower (ԱԺՁ տեղ, Երեւան), Ruins Sounds (Երեւան), Piano meets Laptop (Ակումբ, Երեւան), Another City or the “Other” in the City (Երեւանի ժամանակակից արվեստի թանգարան):

<https://soundcloud.com/vardan-harutyunyan>

**Հարցերի եւ այլ մանրամասների համար** խնդրում ենք դիմել նախագծի ղեկավար Անուշ Զեյնալյանին՝ գրելով [a.zeynalyan@foundationaa.com](mailto:a.zeynalyan@foundationaa.com) հասցեով կամ զանգահարելով +374 41198908: